

## ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԸ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Նադոյան Ա. Ա. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

a.nadoyan@mail.ru

Մինասյան Գ. Հ. (Եվրոպական համալսարան, Երևան, Հայաստան)

gayane-minasyan-1994@mail.ru

Ներկայացման ամս.՝ 20.06.2019

գրախոսման ամս.՝ 24.07.2019

տպագրության ընդունման ամս.՝ 13.09.2019

Հոդվածում քննարկվում են ՀՀ ՊՆ զինծառայողներին բնորոշ շեղված վարքաձևերը, դրանց առաջացման պատճառներն ու հետևանքները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել զինծառայության պայմաններում իրականացվող և դրսևորվող վարքի ձևերն ու վարքի շեղումները, վարքականոնների սխալ կատարումը, որոնք ևս հանգեցնում են շեղվածության, գտնել անհամապատասխանություններն ու տալ մասնագիտական լուծումներ: Մեր կողմից ծրագրված շարունակական հետազոտության շրջանակում առաջադրված խնդիրներից են՝ ծանոթանալ մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումներին ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ, ուսումնասիրել հետազոտվող զինծառայողների վարքաձևերի առանձնահատկությունները, դրանով պայմանավորված շեղումները:

Նշված խնդիրների իրականացմամբ է պայմանավորված հոդվածում արծարծված հիմնախնդրի արդիականությունը: Աշխատանքի վարկածն է՝ որքան բարձր է զինծառայողի ագրեսիվության մակարդակը և ինքնագնահատականը, այնքան զինվորի կողմից շեղված վարքաձև դրսևորելու հավանականությունը մեծանում է:


Հետազոտական աշխատանքները իրականացվել են ՀՀ ՊՆ N զորամասի թվով 260 ժամկետային զինծառայողների հետ՝ 2019 թ. հունվարից մինչև ապրիլ ընկած ժամանակահատվածում: Տվյալ հիմնախնդիրը ուսումնասիրելու նպատակով անցկացվել են փորձարարական ախտորոշման համապատասխան մեթոդներ( թեստերի մեթոդ՝ Բասս-Պերիի ագրեսիվության ախտորոշման մեթոդիկա (BPAQ) [1; էջ 91], Ա.Մ. Պրիգոժինի ինքնագնահատականի սանդղակ [4, էջ 104], հոգեբանական զրույց և դիտում):

**Հանգուցային բառեր՝** զինծառայող, վարքի շեղումներ, ագրեսիվություն, ինքնագնահատական, ապահարմարում:

Ինչպես գիտենք, զինծառայության պայմանները լիովին տարբերվում են քաղաքացիական կյանքից, և տարբեր են նաև այնտեղ դրսևորվող վարքի ձևերը: Պատճառն այն է, որ եթե քաղաքացիական կյանքում որոշակի սահմանների և նորմերի խախտումն է համարվում շեղվող վարք, ապա զինծառայության պայմաններում հնարավորություններն ավելի սահմանափակ են, կանոնակարգված, և զինվորականը շատ քիչ հնարավորություններ ունի իրեն ազատ դրսևորելու: Այս ամենը


հանգեցնում է զինծառայության պայմաններում շեղվող վարքի արձանագրմանը: Իր ավտորիտարիզմի և գերկարևոր լինելու հանգամանքից ելնելով՝ այս ոլորտում յուրաքանչյուր թերացում համարվում է շեղվող վարքի դրսևորում: Օրինակ, եթե քաղաքացիական կյանքում տղան փողոցում քայլում է առանց սափրվելու, շեղվող վարքի դրսևորում չէնք համարում, իսկ զինծառայության պայմաններում, եթե նկատենք այդպիսի արտաքինով զինվորականի, ապա կարող ենք ասել, որ տվյալ անձը շեղվող վարք է դրսևորել և չի ենթարկվել հրամանին, զինվորական կանոնադրությանը: Ինչպես քաղաքացիական կյանքում, այստեղ ևս, շեղվող վարքաձևերի տեսակները նույնն են և էլ ավելի բազմազան: Հինծառայության պայմաններում բոլոր այն շեղվող վարքաձևերը, որոնք չեն համապատասխանում ՁՈՒ-ի կանոնադրությանն ու օրենքին, համարվում են շեղված[2]: Մարտական հզոր ուժ դառնալու համար բանակը պետք է առավելագույնս կարգապահ լինի: Իսկ զորամասի կարգապահությունը ձևավորվում է առանձին զինվորի կարգապահությունից և վարքից: Հինվորների կարգապահությունը ձեռք է բերվում ոչ թե սխալ վարքի համար պատժվելու արդյունքում, այլ նրանց վրա այնպիսի ազդեցության գործոնով, որը բերում է ճիշտ վարք ցուցաբերելու ցանկություն ունենալուն[6; էջ 45-46]: Շեղվող վարքի դրսևորումները, դրանց վրա ազդող ու դրդիչ գործոնները հետաքրքրում են ինչպես ռազմական ոլորտի ներկայացուցիչներին, այնպես էլ ռազմական բժիշկներին, ռազմական հոգեբաններին, ռազմական ոստիկաններին և հարակից ոլորտի այլ ներկայացուցիչների: Այս մասին կատարված բազում ուսումնասիրություններ պարզել են, որ զինծառայության պայմաններում շեղվող վարքի առաջացման և դրսևորման պատճառ կարող են հանդիսանալ ինչպես սոցիալական շփումներն ու սոցիումը, այնպես էլ զինվորի զուտ հոգեբանական վիճակը: Հինծառայության պայմաններում կան բազում նախապայմաններ, որոնք խոցելի մարդկանց մոտ ձևավորում են շեղվող վարքագիծ: Օրինակ, սոցիալ-հոգեբանական ապահարմարում: Հինծառայողները սոցիալ-հոգեբանորեն հարմարված են, երբ չունեն տևական կոնֆլիկտներ, իսկ ներհոգեկան կոնֆլիկտային վիճակները երկարատև չեն, հիմնականում բավարարված են նրանց անվտանգության, սիրված լինելու, հարգանք վայելելու, և վերջապես, ինքնադրսևորվելու հիմնարար պահանջունքները: Հինծառայության պայմաններին ընդհանուր առմամբ հարմարված ասելով պետք է հասկանալ կայուն իրադրական հարմարվածության (ադապտացվածության) վիճակը[3]: Հինծառայողի շեղվող վարքին հանգեցնում է նաև անձի հոգեկերտվածքը, նրա բնույթը, խառնվածքի գերակշռող տիպը ու բնավորության գծերը, բնավորության շեշտվածությունները: Մյուս կարևոր գործոնը ագրեսիվությունն է, որն արտահայտվում է մարդկանց մոտ՝ տարբեր մակարդակների վրա հանդես գալով: Կա համոզմունք, ըստ որի շեղվող ագրեսիվ վարքը առավել շատ հանդիպում է տղամարդկանց, քան կանանց մոտ[7; էջ 188]: Երբեմն, ագրեսիվությունը կրում է պաշտպանական բնույթ. միշտ չէ, որ ագրեսիվությունը ազդող գործոն կարելի է համարել շեղվող վարքի համար: Սակայն, ինչպես գիտենք, ագրեսիվությունն ու ագրեսիվ վարքը անբաժան են զինվորականի կյանքից: Հաշվի առնենք այն հանգամանքը, որ նրանք իրենց խմբերում արտահայտվում են հայիոյախառն բառերով, որն արդեն

ապացուցում է ագրեսիվության առկայության մասին: Չինժառայության պայմաններում որպես շեղվող վարքի դրսևորումներ են հանդես գալիս սեռական որոշ շեղումներ՝ համասեռամոլությունը (հոմոսեքսուալիզմ), թմրամոլությունը, սուիցիդալ վարքը և դրա տարատեսակները [5; էջ 120]:



**Նկար 1.** Ստացված տվյալների թվային համեմատական վերլուծություն

Եթե համեմատենք արդյունքները, ապա կնկատենք, որ զինվորների մոտ գերակայում է թե՛ ֆիզիկական, թե՛ վերբալ ագրեսիան: Չնայած պետք է նշենք, որ զինժառայության պայմաններում ագրեսիվության առկայությունը համապատասխանում է, և այս ցուցանիշը բոլորովին էլ զարմանալի չէ: Ագրեսիվությունը բնորոշ գիծ է զինժառայության ընթացքում, բայց եթե այս նույն մեթոդիկական անցկացնենք քաղաքացիական պայմաններում գտնվողների հետ, և գրանցենք նմանօրինակ արդյունք, վերբալ ագրեսիվության բարձր լինելը կհամարենք անձի պաթոլոգիա: Բացահայտում չէ նաև այն փաստը, որ զինժառայության պայմաններում հաղորդակցվելիս օգտագործվում են հայիոյախառն բառեր, որոնք մենք համարում ենք վերբալ ագրեսիայի տարրեր: Դրանք ամբողջությամբ բացասական չենք կարող համարել, քանի որ երբեմն այդ վերբալ ագրեսիան ունենում է պաշտպանական դեր և կանխում է ֆիզիկական ագրեսիան և դրանից բխող կոնֆլիկտն ու շեղվող վարքի տարատեսակները:



**Նկար 2.** Ինքնագնահատականի իրական և ցանկալի ցուցանիշների համեմատություն

Այս մեթոդիկայի արդյունքում պարզ դարձավ, որ զինծառայողների իրական ինքնագնահատականը բարձր է, բայց ոչ չափազանցված, իսկ ցանկալի արդյունքը ավելի բարձր է բոլոր ոլորտներում, ինչպես և կարելի էր եզրակացնել: Տվյալ հիմնախնդրի շուրջ կատարած տեսական և փորձարարական աշխատանքի արդյունքում առաջարկում ենք հետևյալ մասնագիտական լուծումները. դեռահասության տարիքում գտնվող երեխաների /արական սեռի ներկայացուցիչ/ հետ տարվեն աշխատանքներ հոգեբանի և զինղեկի կողմից: Այս մասնագետները առավելագույնս կվերահսկեն և կշտկեն շեղվող վարքի միտվածությունները: ՊՆ սպաների (հատկապես սպա-հոգեբանների), իրամանատարների շրջանում անցկացվեն վերապատրաստման դասընթացներ, թրեյնինգներ՝ զինելու նրանց տվյալ հիմնախնդրի շուրջ եղած արդի տեղեկատվությամբ և աշխատանքի պրակտիկ տեխնիկաներով: Նպատակի իրագործումը կհանգեցնի նրան, որ սպայական կազմի յուրաքանչյուր ներկայացուցիչ ի զորու կլինի կանխել զինվորի կողմից թույլ տրվող շեղվող վարքաձևը: Նախագորակոչային և գորակոչային ժամանակահատվածում իրագործվեն հոգեբանական, ինչպես նաև կանխարգելիչ (շեղվող վարքի դրսևորման) աշխատանքներ:

Այսպիսով, կատարած աշխատանքի արդյունքում կարող ենք ասել, որ մեր կողմից առաջադրած վարկածը հաստատվում է, քանի որ զինծառայողների մոտ ագրեսիվության և ինքնագնահատականի բարձր արդյունք է գրանցվել: Զինծառայության ժամանակահատվածում կարգապահության պահպանման դեպքում շեղվածության, ագրեսիվ վարքի միտված զինծառայողների քանակը կնվազի: Զինծառայության պայմանները չեն օժանդակում զինվորին կատարելու շեղվող վարքի այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են սուիցիդը, հարբեցողությունը, խաղամոլությունը և այլն: Զինծառայության ընթացքում առաջացող շեղվող վարքը անմիջականորեն կապված է անձի (զինվորի) ագրեսիվության բարձր աստիճանի հետ, որի արդյունքում զինծառայողը դիմում է շեղված վարքաձևի և պատժվում՝ իր կողմից կատարած արարքին համապատասխան:

## Գրականություն

1. Ավանեսյան Հ.Մ., Հարությունյան Ն. Ա., Հովհաննիսյան Ս. Վ., Ստեփանյան Լ.Ս., Ասրիյան Է. Վ. Զինվորի հոգեկան հատկությունների գնահատման և զարգացման մեթոդներ, Երևան 2017, էջ 180.
2. ՀՀ ՁՈւ ԳՇ անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչություն., Հոգեբանական աշխատանքը ՀՀ զինված ուժերում, Երևան 2017.
3. ՀՀ ՊՆ Բարոյահոգեբանական ապահովում, Երևան 2015.
4. Նադոյան Ա.Ա. Տարեցների սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացի գենդերային առանձնահատկությունները, Երևան 2010; էջ 151.
5. Զամալյան Դ.Վ. Ռազմական հոգեբանության հիմունքներ 2-րդ մաս; Երևան, «Լինգվա» հրատ., 2008; էջ 171.
6. Քոուփլենդ Ն. Հոգեբանությունը և զինվորը; Երևան, <<Լուսակն>> հրատ., 2007; էջ 143
7. Маклаков А.Г. Военная психология; Питер, 2005 – с. 462.

## ДЕВИАНТНОЕ ПОВЕДЕНИЕ У ВОЕННОСЛУЖАЩИХ

*Надоян А. А. (ЕГУ, Ереван, Армения)*

*Минасян Г. Г. (Европейский университет, Ереван, Армения)*

В статье рассмотрены основные вопросы девиантного поведения у военнослужащих, причины, изменения поведения у военнослужащих, нормы поведения в Армянской армии. Одна из проблем нашей исследовательской программы направлена на девиантность военнослужащих, которая связана с агрессивностью и самооценкой. Качество профессиональной деятельности военнослужащих, нормальное поведение находится в прямой зависимости от уровня их психического здоровья, сохранение и укрепление которого является важным направлением в работе военно-психологической службы.

**Ключевые слова:** *военнослужащий, девиантное поведение, агрессивность, самооценка, дезадаптация.*

## DAVIANT BEHAVIOR AMONG SERVICE MEN

*Nadoyan A., (YSU, Yerevan, Armenia)*

*Minasyan G. G. (European University, Yerevan, Armenia)*

The article discusses the main issues of deviant behavior among servicemen, causes of changes of their behavior, also norms of behavior in Armenian army. One of the issues of our research program is directed to servicemen's deviant behavior, which is connected to aggressiveness and self-esteem. The quality of servicemen's professional

activities and their behavior directly depends on the level of their psychological health, preservation and strengthening of which is one of the most important directions in the work of military psychological services.

**Keywords:** *serviceman, deviant behavior, aggressiveness, self-esteem, disadaptation.*